ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 12 հունվարի 2024թ.

Ժամը 10:30

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Մկրտիչ Խաչատրյան

Անդամներ՝ Գարեգին Պողոսյան, Տիրան Խաչատրյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20» ծածկագրով գնման ընթացակարգի դիմում-հայտարարության շտկման մասին

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի N 6 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի հայտում առկա անհամապատասխանությունների շտկման նպատակով՝ 09.01.2024թ.-ին կայացած հայտերի բացման նիստով հանձնաժողովը որոշում էր կայացրել. հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 N 526-Ն որոշման 41-րդ կետը, 1 աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը և «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին տալ շտկման հնարավորություն՝ N 6 չափաբաժնի մասով:

2. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20» ծածկագրով գնման ընթացակարգի դիմում-հայտարարության շտկման գնահատման մասին.

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի դիմում-հայտարարությունների շտկման համար նախատեսված ժամանակահատվածի ավարտից հետո, գնահատող հանձնաժողովը, գնահատեց «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, որի արդյունքում պարզվեց հետևյալը.

ա/ «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը,

բ/ «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում ապրանքային նշանի և տեխնիկական բնութագրի սյունակներում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես նշված սյունակներում պահանջվող տեղեկության փոխարեն տեղադրված են գծիկներ:

Վստահ կարող ենք արձանագրել, որ «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի կողմից, դիմում-հայտարարության շտկման համար նախատեսված ժամանակահատվածի ընթացքում, ոչ մի շտկում չի իրականացվել:

2.2 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

ա/ «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և հայտը մերժել, քանի որ վերջինս չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին,

բ/ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20» ծածկագրով գնման ընթացակարգի N6 չափաբաժնի մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

գ/ Սահմանված կարգի համաձայն, ներկայացնել «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի վերաբերյալ փաստաթղթերը ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

4. Ընթացակարգի չկայացած չափաբաժին հայտարարելու մասին

4.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/19» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

- N 8 չափաբաժինը հայտարարել չկայացած՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

3. Ընթացակարգի ընտրված՝ հաղթող, մասնակցին որոշելու և հայտարարելու մասին.

3.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

- N 1 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «ՋԻ ԷՄ ՊՐՈ» ՍՊԸ-ին,
- NN 2,4 չափաբաժինների մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին,
- N 3 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «Կոմպասս» ՍՊԸ-ին,
- N 5 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «Արթուր Հարությունյան Սերյոժայի» Ա/Ձ-ին,
- N 7 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. **Պայմանագիր կնքելու որոշման մասին.**

Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, ըստ որի՝

4.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20» ծածկագրով գնման ընթացակարգի 1-5,7 չափաբաժինների մասով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.2. Ընտրված՝ հաղթող, մասնակիցների հետ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Մ. Խաչատրյան**

Քարտուղար՝ _____ **Ն. Աբովյան**

Անդամներ՝ _____ **Գ. Պողոսյան**

_____ **Տ. Խաչատրյան**